

715

703.6

L-88

703.6  
L-88

№ 6

Ն ր Գ ր ա դ ա ր ա ն

№ 6

Ա. ԼՈՒՆԱԶԱՐՍԿԻ

**ԳԵՂԱՐԻԵՍԱՆ ԳԵՂԱՐԻԵՍՏԻ՝**

**ԹԷ՛ ԳԵՂԱՐԻԵՍԱՆ ԿԵԱՆՔԻ ՀԱՄԱՐ**

*Քարգմանեց*

ՅԱԿՈՐ ՅԱԿՈՐԵԱՆ

**Ք Ի Յ Լ Ի Ս**

Տպարան «Նաղեժդա» Բարձրնոկայա 14.

1914

403-6  
L-88

Հ. Երանյան,

320  
21 OCT 2010

№ 6

Ն ո Ր Գ Ր ա դ ա ր ա Ն

№ 6

Ս. ԼՈՒՆՆՉՆՐՍՅՈՒ

**ԳԵՂԱՐԻԵՍԱՇ ԳԵՂԱՐԻԵՍՏԻ՞,  
ԹԷ՞ ԳԵՂԱՐԻԵՍԱՇ ԿԵԱՆՔԻ ՀԱՄԱՐ**

Թարգմանից

ՅԱԿՈՅ ԵՄԻՆՅԱՆ

Թ Ի Յ Լ Ի Ս  
Տպարան «Նաղեժգա» Բարոնսկայա 14.  
1914

### Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Մրանից մի քանի տարի առաջ, երբ հայ գրական հոսանքների մէջ տեղի ունէր մի բանական աջ մասին, թէ՛ սրն է իսկական գեղարեստը և սրը նրա խորթ զաւակը... մենք մի նամակով դիմեցինք ուսս ակնաւոր մարքսիստ-փիլիսոփայ Ա. Բոգդանովին և նրա կարծիքը այդ հարցի մասին իմանալու համար՝ տւինք հետեւեալ հարցը.

Ինչպէ՞ս է նայում նա գեղարեստի վրայ ընդհանրապէս և պրօլետարական պօէզիայի վրայ մասնաւորապէս. կամ որ աւելի ճիշտ կլինէր ասել՝ ինչպէ՞ս պիտի լինի թէ՛ մէկը և թէ՛ միւսը:

Ռուս մարքսիստը—որի, ի դէպ ասած, բաղմանատոր աշխատութիւններից հայ ընթերցողը ծանօթ է միայն նրա «Տնտեսական գիտութեան» համառօտ դասընթացքի և մէկ էլ մօտեսրուժա «Նոր Գրադարանի» հրատարակութեամբ լոյս տեսած «Մարդու և մեքենայի միջև» գրքոյկի հետ—մի ընդարձակ նամակով յայտնեց ընդհանուր գեղարեստի մասին իր քեզերը միայն, իսկ պրօլետարական պօէզիայի մասին իր կարծիքը վերապահելով, առաջարկեց մեզ դիմել Ա. Լուճաշարսկուն՝ որպէս սոյնանման հարցերի պարզաբանութեան մէջ աւելի ձեռնհաս գրականագէտի:

Մի այլ անգամի թողնելով «պրօլետարական պօէզիայի» մասին յայտնած Ա. Լուճաշարսկու կարծիքը, \*) մենք այստեղ զետեղում ենք Ա. Բոգդանովի նամակի այն մասը, որը վերաբերում է ընդհանուր գեղարեստին և որը անշուշտ լրացնելու է Լուճաշարսկու այս գրքոյկի մէջ յայտնած տեսակէտները:

Ահա նամակը.

«...Բացի գեղարեստի ծագման և կեանքի մէջ նրա կատարելիք դերի ընդհանուր անալիզից, որի մասին առիթ եմ ունե-

\*) Ընթերցողին կծանօթացնենք այս հարցի մասին Լուճաշարսկու սենեցած կարծիքի հետ, երբ «Նոր Գրադարանի» հերթական գրքոյկներից մէկի միջոցով լոյս կընծայենք մեր մի աշխատութիւնը՝ «Պրօլետարական պօէզիան և ապագայ գեղարեստը» Յ. Յ. խորագրով:



2220-90

ցել մօտ անցեալներումն ևս գրելու \*), ևս հակամէտ եմ այս անգամ էլ կանգ առնելու գեղարւեստի մի առանձնայատկութեան—այն է՝ նրա մարգարեական բնոյքի վրայ:

Գեղարւեստը՝ բոլորովին անկախ իր տենդենցներից, կիրառելիութեան և որպէս նախատիպ (прообразъ) կեանքի այլ, աւելի բարձր տիպերի:

Իր ստեղծագործութեան մէջ գեղարւեստագէտը—լինի նա պատկանելիս անհատական, թէ կոլլեքտիվ ստական ուղղութեան—ազատօրէն ընտրում և ստեղծում է միջավայր, մարդկանց տիպեր, նրանց յարաբերութիւնները, ճիշտ այնպէս, ինչպէս ապագայ մարդկութիւնը ազատօրէն պիտի ստեղծագործի իր միջավայրը, իր տիպերը, իր յարաբերութիւնները, երբ վերջնականապէս կյաղթահարի բնութեան տարրերին:

Թէ այս և թէ այն ղէպքում այդ ազատութիւնը ոչ մի առնչութիւն չունի սովորական պատահականութեան կամ հասարակ կամայականութեան հետ:

Ես ի նկատի ունեմ ուսումնասիրել և ցոյց տալ, որ այդ ազատութեան էութիւնը իսկապէս կայանում է այն բանի մէջ, երբ մարդը յաղթահարելով իր տարերային ոյժն ու անհատական բնութեան հակասութիւնները՝ կդառնայ «աշխարհի իսկական գեղարւեստագէտը»:

Ես նպատակ ունիմ ցոյց տալ, որ անցեալի և ժամանակակից գեղարւեստագէտների ստեղծագործութիւնը՝ թէկուզ բոլորովին հեռու որեւէ ազատագրական տենդենցներից՝ իր բնութեան խորքում կրում է թերևս թոյլ, բայց ապագայ մարդկութեան կեանքի նոր տիպերի նախազգացման սաղմը:

Ինձ ֆիում է այնուհետև եզրափակել, թէ ինչ անխախտելի կապերով է կապւած գեղարւեստը—որպէս նախատիպ—թէ իր ուշալ, կենսական յարակից ֆունկցիաների հետ, և թէ նրա գործնական կազմակերպութեան հետ...:

Անշուշտ Բօզդանովի այս աշխատութեան հետ մինք կժանօթացնենք մեր ընթերցողներին, երբ նրան կվիճակւի լոյս տեսնել առանձին գրքով:

Յ. ՅԱԿՈՒԲԵԱՆ.

\*) Տես А. Богдановъ, „Культурныя задачи нашего времени“, издание С. Дороватовскаго и А. Чарушникова, Москва 1911 г.

## ԳԵՂԱՐՒԵՍՏԸ ԳԵՂԱՐՒԵՍՏԻ՞Ն, ԹԷ՞ ԳԵՂԱՐՒԵՍՏԸ ԿԵԱՆՔԻ ՀԱՄԱՐ \*)

Այս երկու նշանաբանի տակ մղուել է և մինչև այսօր էլ մղուում է մի կատաղի բանակոխ:

Բայց եթէ ուշադրութեամբ նայենք այս երկու հարցերին, անշուշտ կտեսնենք, որ մէկը նրանցից համարեա զուրկ է իմաստից:

Եւ իրօք՝ ի՞նչ է նշանակում «գեղարւեստը գեղարւեստի համար»... Չէ որ ամեն մի գեղարւեստ ստեղծագործւում և զոյութիւն է ստանում մարդու համար:

Իսկական գեղարւեստագէտ—այդ լօզունգի տեսակէտից—թերևս կարելի լինէր համարել նրան միայն, ով անմիջապէս կ'ոչնչացնէր իր բոլոր աշխատութիւնները. կամ նրան, ով իր հեղինակութիւնները կ'թագցնէր ամենքից: Բայց և այս ղէպքում սխալ կ'լինէր այդպիսի մէկին անւանել իսկական գեղարւեստագէտ, որովհետև այստեղ ևս նա կ'որոնէր իր անձնական հաճոյքն ու ներքին բաւականութիւնը:

Գեղարւեստը միշտ էլ մարդու համար է, ինչպէս հնաւանդ այն ասացւածքը թէ՛ «շաբաթն է մարդու համար և ոչ մարդը՝ շաբաթի»:

Եւ այնուամենայնիւ այդ լօզունգի մէջ ուղում են մտքրած լինել մի որոշ իմաստ:

\*) Այս տեսութիւնը գրւած է յատկապէս «Նոր Գրադարանի» համար և առաջին անգամ լոյս է տեսնում հայերէն լեզուով: Յ. Յ.

Ինքը, գեղարևեստական ստեղծագործութիւնը բաղկացած է էլեմենտների կազմակերպութիւնից, այն է՝ գրծերի, գոյների, բառերի, ելևէջների համադրութիւնից, որոնք որևէ նպատակի հասնելու համար՝ արտայայտում են որոշ հասկացողութիւններ, գործողութիւններ և զգացմունքներ:

Այդ նպատակին հասնելու համար անխուսափելիօրէն առաջ է գալիս մի ձգտում, այն է՝ մարդու, տեսնողի, լսողի, ընթերցողի մէջ յարուցանել, այսպէս կոչւած, էսթետիկական յոյզեր, մի տեսակ ուրախ զգացմունք, խորին գոհունակութիւն, հաճոյք պատճառող նուրբ հրճւանք, երբեմն էլ բուռն, փոթորկալից խանդավառութիւն, մի խօսքով այն բոլորը, ինչ արտայայտում է «որքան գեղեցիկ է» բացականչութեամբ:

Որո՞նք են, ուրեմն, էլեմենտների կազմակերպող օրէնքները, որ մեզ հասցնում են այդպիսի հետևանքների:

Նրանք շատ բարդ են և չեն կարող տեղ բռնել մեր այս համառօտ տեսութեան մէջ. բայց և այնպէս նրանք նման են այն օրէնքներին, որոնցով օգտւում է գիտնականը, երբ ուզում է կառուցանել, կամ հիմնաւորել մի որևէ թէօրիայ:

Ինչի՞ համար է ծառայում թէօրիան:

— Իրականութիւնը պարզաբանելու համար: Թէօրիան իրականութիւն արտայայտող հասկացողութիւնների այնպիսի մի սխտեմ է, որը մեզ հնարաւորութիւն է տալիս աւելի մեծ զիւրութեամբ իւրացնել այդ հասկացողութիւնների էութիւնը և յաճախ իսկ ազդել նրանց վրայ տեխնիկօրէն:

Նոյն հետևանքին է ձգտում հասնելու շատ անզամբօրրովին անգիտակցաբար և՛ գեղարևեստագէտը: Բայց նա իրականութիւնը չի պարզում մեր բանականութեան համար, այլ նրան մօտեցնում է մեր զգացմունքներին:

Կամ նա ստեղծում է՝ այսպէս կոչւած՝ գեղեցիկ և

չքեզ առարկաներ, որոնց շուքն ու փայլը կայանում է այն բանի մէջ, որ նրանց ձևը խորապէս համապատասխանում է մեր մարդկային ձգտումներին, կամ անմիջապէս ենթարկւում մեր ջղային սխտեմի իւրացնող պահանջներին: Երբեմն էլ նրանց կտեսնենք սիմֆօնիաներ, կամ պօէմներ գրելիս, որոնք իւրայատուկ կերպով անդրադարձնում են մարդու ներքին և արտաքին աշխարհը, իրականութեան մէջ մտցնում կրքի բուռն ու գունեղ արտայայտութիւններ, սիրոյ կամ կշտամբանքի, իրերի ըմբռնողութեան կամ հանուր ներողամտութեան, ցասման, կամ արդար զայրոյթի արտայայտութիւններ և այլն:

Գեղեցիկ և չքեզ առարկաներ տեսնելուց մենք ուրախանում ենք այն պատճառով, որովհետև մեզ շրջապատող միջավայրը մեր տպաւորութիւնների համար պահանջում է որոշ լարւածութիւն. իսկ միջավայրի գեղեցիկ էլեմենտները — լինեն նրանք մարդու, կամ բնութեան միջոցով երեւան եկած — այդպէս են անւանւում այն պատճառով, որովհետև նրանց կարելի է լինում իւրացնել մեծ զիւրութեամբ, այսպէս ասած՝ համարեա թէ ձրի: Սրանք են, որ առանց որոշ ջանքերի գործադրութեան՝ մեզ տալիս են հարուստ քանակութեամբ տեսողական, լսողական, կամ համադրական տպաւորութիւններ. (այսինքն, երբ համակուում ես ուրիշի արտայայտած զգացմունքներով):

Այնպէս որ, նոյն իսկ առաջին նւագ ամենապարզ թւացող գեղարևեստական ստեղծագործութիւնը իրենից արդէն ներկայացնում է կեանքի ըմբռնումը հեշտացնող մի կազմակերպութիւն:

Առաւել ևս այդ ճիշտ է այսպէս կոչւած՝ խոր օցնցող ստեղծագործութիւնների վերաբերմամբ: Սիմֆօնիան կամ արագեղիան, կամ վէպը հեշտութեամբ մեզ տալիս են կենսական մեծ փորձառութիւն:

Միայն զրա վրայ հիմնւած, միայն մեր տպաւորու-

թիւնները կազմակերպութեամբ, մեր փորձառութիւնը ինքնաբերաբար հարստացնելով միայն՝ մենք կ'ըմբռնենք գեղարւեստի իսկական նշանակութիւնը:

Եւ գեղեցկութեան ամբողջ գաղտնիքն էլ հենց կայանում է դրա մէջ:

Աւելի խելամիտ և գեղարւեստը խորապէս ըմբռնող թէօրէտիկները, որոնք պատկանում են զուտ գեղարւեստի կողմնակիցների բանակին, այդ լաւ են հասկանում: Բայց անա թէ ինչ են ասում նրանք. ի հարկէ գեղարւեստի նպատակը այն է, որ մեզ ուրախութիւն պատճառի, այլ խօսքով՝ տրամադրի, մաքրի, գտի, ազնւացնի մեր հոգին, իմաստուն դարձնի մեզ: Բայց գեղարւեստը կհասնի այդ նպատակին այն ժամանակ միայն, երբ գեղարւեստագէտը զուտ գեղագիտական խնդիրներից բացի՝ չի գնիլ այլ կանխակալ նպատակներ և ձգտումներ:

Գեղարւեստագէտը պարտաւոր է ինքն իրեն թելադրել այսպէս. «Ես ուզում եմ պրտադրել գեղեցիկ ստեղծագործութիւն», դրա համար նա, ի հարկէ վարպետօրէն, կազմակերպում, մշակում է այս կամ այն նիւթը՝ վերցրած իր սեփական կեանքից՝ լինի այդ կապած մարդկանց, թէ բնութեան հետ:

Բայց վնչ նրան, ասում են զուտ գեղարւեստի կողմնակիցները — ով ընդունւած նպատակի փոխարէն — տալ գեղարւեստական գործ — այսինքն՝ ներդաշնակ ամբողջութիւն գծերի, գոյների, շեշտերի, ոճերի և այլն, մտածում է հետեւել որևէ կողմնակի նպատակների:

Վնչ նրան, եթէ նա կամեցաւ ընթերցողի շնքին փաթաթել այս կամ այն եզրակացութիւնը, կամ եթէ համարձակեց իր գեղարւեստական յղացումը նախօրօք ենթարկել զուտ գեղարւեստի սահմանից դուրս գտնուող որևէ նպատակի, կամ թէ չէ՝ փորձեց կուել որևէ չարիքի դէմ,

և առհասարակ այն արժէքների գնահատման դէմ, որը առօրեայ գլարձանքից դուրս է:

Երբ գեղարւեստագէտը այլ նպատակների չի հետևում, բացի այն երջանիկ նպատակից, որ ստեղծի զուտ գեղեցիկը և ապա այդ գեղեցիկը ընծայաբերի ուրիշներին, անա այն ժամանակ նա, ասում են այդ մարդիկ, գեղարւեստը ստեղծում է գեղարւեստի համար, կամ որ աւելի ճիշտ կլինէր ասել՝ գեղարւեստը զուտ «գեղարւեստական հաճոյքի» համար:

Եւ նկատեցէք, շարունակում են նրանք. հենց որ գեղարւեստագէտը գաւաճանում է այդ կանոնին, և գեղարւեստական գործի հետ կապում բարոյական կամ հասարակական մի որևէ խնդիր՝ այդ բոլորից նրա հեղինակածը դառնում է տենդէնցիօզ, միտումաւոր գործ, այլ խօսքով՝ բռնագրօսիկ (направленскій):

Չգտելով ապացուցել իր մի որևէ կարծիքը՝ տենդէնցիօզ գեղարւեստագէտը աղաւաղում է իսկական կեանքը, իր երևակայութիւնը ուղղում է սչ թէ դէպի ազատ ուղիները, այլ դէպի նեղընթաց հունները՝ թելադրւած իր պայքարի պահանջներով և քարոզներով սնւած բանականութեամբ. իսկ այդ անմիջապէս ստացնում է հասարակութեանը: Նա իր առջև տեսնում է ոչ-արտիստին, որը ստեղծագործում է ազատօրէն, առանց յետին մտքերի, կամ որի ձիրքը արտայայտւում է գեղեցիկ և նուրբ կերպով վերապրւած նիւթերի կազմակերպման մէջ: Ոչ, նա իր առաջ այժմ տեսնում է «պարոն վարժապետին», խորամանկ պատգամախօսին: Դեռ էլի ոչինչ, եթէ նա խօսէր պարզօրէն, ուղղակի... Թէ չէ մի կողմից թագնւում է գեղարւեստագէտի դիմակի տակ, կարծես աշխատում է այնպէս անել, որ մենք չնկատենք նրա ուսուցումները ու քարոզները, միւս կողմից աշխատում է բոլոր այդ պատկերները այնպէս խորամանկօրէն հիւսել, որ մեզ՝ որպէս

մանուկները՝ բերի հանգեցնի այն հետեանքներին ու մտածելու եղանակներին, որոնց նա այնպէս կցանկանար մեր շլինքին փաթաթել:

Քարոզի և գեղարւեստի այսպիսի մի ապօրինի միացումից տուժում է թէ մէկը և՛ թէ միւսը:

Յիշում եմ, թէ ինչպէս մի անգամ այդ մտքերը իմ առաջ փայլուն կերպով արծարծեց մի գրող, որը միաժամանակ յայտնել էր, թէ ինքը խորապէս հաւատացող բրիտանացի է:

Ու ես նրան հետևեալ հարցը տւի.

— «Ինչպէս էք վերաբերում դուք դէպի Աւետարանի առակները»:

Խեղճը սաստիկ շփոթւեց ու կարմրեց:

Այս տեսակ հարց նրա մտքովն անգամ չէր անցել: Ինչ ասել կուզի, որ առակները տենդէնցիօզ արտայայտութիւններ են: Քրիստոսը զւարճացնելու համար չէր ասում իր առակները, այլ սրանց միջոցով արծարծելու իրեն համար առաջնակարգ նշանակութիւն ունեցող վարդապետութեան գաղափարները:

Եւ այնուամենայնիւ նա կանգ չէր առնում այն բանի առաջ, որ իր ուսուցումը պարուրւած լինէր պարզ և անպաճոյճ առակների գեղեցիկ զգեստներով:

Կարելի է արդեօք, ամենից առաջ, ժխտել քարոզչի, վարդապետողի իրաւունքը, երբ նա ցանկանում է իր քարոզները պատկերացումներով արտայայտել: Այն գեղարւեստը, որը ծնունդ է առնում այդ ձևով, համարում է առաքելական, մարգարէական-պատգամական, փիլիսոփայական գեղարւեստ, (является искусствомъ апостольскимъ, пророческимъ, философскимъ):

Բայց և երբ քարոզիչը զուրկ է տաղանդից, այն ժամանակ, իհարկէ, նրա իղէանների կմախքը մնում է մերկ, իսկ պատկերները՝ վախ, անկենդան, մինչդեռ պատկեր

րացումները իրենց շաւղով ընթանալիս, այլանդակում են այդ կմախքը և իղէան դարձնում անորոշ ու անբնական:

Բայց երբ այդպիսի մի քարոզիչը տաղանդաւոր է, ստացւում է մի զմայլեցուցիչ հետեանք: Միաժամանակ նա մեզ տալիս է թէ գեղեցիկ մտքերի և՛ թէ նրանց հետ շողկապւած գունագեղ ձևերի կազմակերպութիւնը:

Ի՞նչ ասել կուզի, որ այդպիսի մի լայն, համարեւոր գրկող կազմակերպումը մեր մէջ պիտի յարուցանէ ու տանի մեզ դէպի էստետիկական տպաւորութիւնների ամենաբարձր աստիճանը:

Ոչ ոք, իհարկէ, չի համարձակւի արգելել իրենց քարոզիչներ համարող մարդկանց, որ սրանք իրենց ուսմունքների համար օգտեն գեղարւեստից որպէս միջոց:

Այժմ էլ վերցնենք գեղարւեստագէտին:

Գեղարւեստագէտը միայն ձգտում է ուժեղ թափով ընդգրկել այս կամ այն կենսական նիւթը առատօրէն և նրա բովանդակութիւնը հասցնել գեղեցկութեան ամենաբարձր ձևերին:

Բայց թոյլ տւէք մի հարց տալ:

Կարգելէի՞ք դուք արդեօք, որ այդպիսի մի գեղարւեստագէտ լինէր անկեղծ... Եթէ նրա հոգու խորքը փոթորկում է սրևէ սոսկալի բարոյական կրիզիս, կարգելէի՞ք դուք նրան, երբ նա ձգտէր որոնել բարին ու չարը... Եթէ նա տանջւում է մերձաւորների տանջանքով, կարգելէի՞ք դուք նրան, երբ նա ուզում է նրանց ցոյց տալ սիրոյ ուղիները, ուղիներ՝ որոնք կմեղմացնէին նրանց տառապանքները: Կպահանջէի՞ք նրանից արդեօք, որ նա այդ բոլոր յոյզերը խեղդէր իր կրծքի տակ և զբաղւէր գունագեղ կեղծիքներով:

Ոչ մի իրեն յարգը ճանաչող գեղարւեստագէտ թոյլ չի տալ, որ իր հոգու հետ այդպէս խաղային: Նրա համար հեղարւեստը հասարակ արհեստ չէ և ոչ էլ զրացնող իրե-

րի արտադրութիւն: Գեղարւեստը ստեղծագործողի համար սի երգ է, որը բոլորով է նրա հոգու խորիքից՝ լինի այդ արտայայտած հնչիւնների, թէ պատկերացումների միջոցով, միևնոյն է: Իր ամբողջ էութեամբ նա ձուլուում է իր գեղեցիկ ստեղծագործութեան մէջ. և եթէ նրա հոգին լեցուն է գեղումներով, եթէ նա ունի առաջնորդող աստղեր, որոնք կեանքի ծովում ուղեցոյց են հանդիսանում նրա կամքին և զգացմունքներին՝ այն ժամանակ գեղարւեստը անպատճառ կլինի իդէական և եթէ կուզէք՝ նոյն իսկ տենդենցիօզ:

Սակայն տենդենցը կարելի է դատապարտելի համարել այն ժամանակ միայն, երբ գեղարւեստագէտը գլուխ հանել չկարողանայ նրանից. իսկ եթէ տենդենցը ձուլեց գեղարւեստական երկի հետ, դա արդէն ավացոյց է, որ գեղարւեստագէտը օժտւած է հոգոյ հարստութեամբ և բազմաբովանդակ ուժգնութեամբ:

Տեսէք թէ որպիսի ճահճի են մօտենում մաքուր գեղարւեստի կողմնակիցները. բանից դուրս է գալիս, որ իբր ամենալաւ գեղարւեստագէտը նա է, ով դատարկամիտ է և զրկւած ուժեղ կամքից, ով արձագանք չի տալիս կեանքի իսկական երևոյթներին: Բայց չէ՞ որ մարդը քանի խելամիտ, զգայուն և ուժեղ է, այնքան առաւել շուտ նա կունենայ իր սեփական մօրալը, այնքան գունագեղ և ցայտուն կլինեն նրա իդէալները, այնքան աւելի հզօր և հրամայողական թափով նա կցանկար վարակել շրջապատող հասարակութիւնը իր իդէաներով և զգացմունքներով:

Եւ զարմանալի է, որ այս գէպքում նա կհուշակէր... «տենդենցիօզ»...

Նրանք պահանջում են, որ գեղարւեստագէտը հոգայ միմիայն ձևի մասին: Բայց որքան միակողմանի մարդ կլինէր նա այնուհետև, և որպիսի սառնութիւն կընչէր նրա աշխատանքներից:

Եւ ինչո՞ւ այս հասարակ ճշմարտութիւնը չեն ըմբռնում «գեղարւեստը գեղարւեստի համար»-ի ճատագոյնները:

— Որովհետև այս լօգունգի կողմնակիցները պատկանում են բուրժուական դասակարգին և հանդէս են գալիս իբրև իդէօլօգներ բուրժուական ամենապահպանողական մասի:

Բուրժուազիան իդէալներ չունի: Նա վախենում է իդէալներից: Մտցնել գեղարւեստի մէջ նրա մերկանտիլ ձգտումները, նրա սակարկու կեանքի գնահատումները, այդ կնշանակէր նրան մեռած դիակ դարձնել: Բայց բուրժուազիան սիրում է շքեղ նիստ ու կաց. բացի թաւիշ գահաւորակներից, Պարիզի տուալէտ - արդուզարդերից, բացի քաղցրաւենիք, անուշահամ գինիներ ու հոտաւէտ իւղեր գործածելուց՝ բուրժուան և նրա կլինը ցանկանում են և՛ դարձանալ. ուրեմն հարկաւոր է նրանց համար արտադրել գեղեցիկ բաներ, որոնց մէջ, յամենայն դէպս, չկան ո՛չ մի բարձր ձգտում, կամ յղացում, իդէալի ոչ մի հեռաւոր կայծ...

Բայց և այնպէս չի կարելի ժխտել, որ այն գեղարւեստագէտների մէջ, որոնք գրում են բուրժուազիայի համար, չկան իդէական մարդիկ: Այսպիսիները կան. միայն թէ բուրժուազիայի լաւագոյն մասը, առաւելապէս բուրժուական ինտելլիգենցիան, եթէ ունենում էլ է որևէ իդէա, այդ էլ լինում է յոռեսեսական, մոսայ, մանգուժային, (пессимистическая, сумрачная, предсмертная):

Եւ կեանքի այդ տեսակ գնահատման պատկանող հեղինակութիւնների թիւը անհամար է. այն քննադատները, որոնք կողմնակից են «գեղարւեստը գեղարւեստի համար» նշանաբանին, երբէք չեն դատապարտում այդպիսի գրողներին: Այդ մարդկանց գործերը նրանց տեսնելիցիօզ չեն քուլում. նրանք կարծում են, թէ հենց այդ է իսկական գե-

դարւեստը, միայն թէ արտայայտւած է մեղուշ (МИНОРЪ տոնով, ախուր շեշտերով):

Ահա թէ ինչու նրանք բոլորն էլ հիացած են այսպէս կոչւած դեկադանտով, այսինքն՝ անկումի և լքման գրականութիւնից (упадочностью):

Մի ուղղութիւն, որ վրայ տալով, ներս խուժեց անցեալ դարի վերջերին և ինքն իրեն անւանեց իրիկնամտային, գերեզմանային, (ВЕЧЕРНИМЪ, КЛАДБИЩЕНСКИМЪ):

Նոյնպէս և չեն դատապարտի երբէք մի պօէտի կամ երաժշտի, եթէ սրանք իրենց ունկնդիրներին զարճացնելու, «մխիթարելու» նպատակով հեղինակեն կիսա-անասնային զարճանքով լի մի երկ:

Նկարագրել կեանքը զարճալի, բայց անմիտ ծիծաղով, առանց որևէ նպատակի, միայն նրա համար, որ մարտոթիւնը հեշտացնող հոհոց առաջացնի՝ ահա թէ սրն է «գեղարւեստը գեղարւեստի համար»... նշանաբանը:

Այն ժամանակ միայն, երբ գեղարւեստագէտի վիշտը փոխուում է աֆսիւ ցասման և զայրոյթի, երբ նրա քնարը ուսուցանում է արհամարհանքով բարձրանալ ժամանակիս այլանդակութիւններից վեր, այդ ժամանակ միայն «գեղարւեստը գեղարւեստի համար»-ի կողմնակիցները ըսկսում են խօսել «կործանիչ տենդենցի» մասին և սրանով երևան հանում իրենց ուէակցիօնէլ բնոյթը:

Այլ կերպ էլ լինել չէր կարող: Ինչո՞ւ, որովհետև բուրժուայի իդէազուրկ հոգին չէր կարող պարփակել իր մէջ սոյնանման վեհ մտքեր ու բարձր զգացմունքներ: Այդ զգացմունքները նրան խորթ են և օտար: Նրանք նոյն իսկ ուղղակի տարերային հակամարտ մի ոյժ են ներկա-նանում իրա դէմ, որովհետև այդպիսի գեղարւեստը «ցնցում է հին հիմքերը»...

Բոլորովին հասկանալի է ուրեմն, որ այն մարդկանց, որոնք պատկանում են ակտիւ, պրօլետարական դասակար-

զին, լի ցասման և սիրոյ զգացմունքներով, որը զնում է դիմաւորելու գեղեցիկ իդէալի արշալոյսին—ընդհակառակը այդպիսի մարդկանց՝ «էստէտ»-ների գեղարւեստը կթւայ մեռած, գուեհիկ և անբովանդակ, որովհետև նրա մէջ չի խաղում կեանքի հրապուրիչ ոյժը:

Ահա թէ ինչու վերը յիշածս խորագրի տակ երկու լօզունգների միջև եղած կռիւը միշտ կամ երկու դասակարգերի, կամ զանազան անձերի ու խմբակցութիւնների կռիւ է, որոնք գիտակցաբար թէ անգիտակցաբար թեքուում են կամ դէպի հին, կամ դէպի նոր աշխարհները:



ՊԱՏՐԱՍԵ Է ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

- 1) Ա. Բագդանով.— Կօլլեքտիվի գերը պատմութեան  
մէջ (գիտական) . . . , 5 կոպ.
- 2) " Մեծ մարգը, հայերէն և ռուսերէն  
լեզուով . . . . 2 կոպ.
- 3) Բանուրի այրօմը.— Ա. պրակ . . . . 5 կոպ.
- 4) " " Բ. պրակ . . . . 5 կոպ.
- 5) Յակոբ Յակոբեան.— Պրօլետարական պօէզիան և  
ապագայ գեղարւեստը . . . 5 կոպ.
- 6) Ա. Լունաչարսկի.— Էմիլ Վերհարն. . . , 5 կոպ.
- 7) " Հասարակականութիւնը և գե-  
ղարւեստը, հայերէն և ռուսերէն . . . 5 կոպ.

186A/399

1-00

**ՀՐԵՏԱՐԵՎՈՒԹՅԱՆ ՏՊԵՐԱԿԱՆ ԲԱՆԻՈՐՆԵՐԻ**

Լոյս եւ ստեղ Նոր Գրադարանի հետեւեալ հրատարակարիւնները.

- 1) ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻՅ—Երկու պատմածք X—XI, թարգմ. Յ. Յակոբեանի. 5 կոպ.
- 2) Ա. ԲՕԳԴԱՆՈՎ.—Մարդու և մեքենայի միջև, թարգմ. Սեղալի. 5 "
- 3) "Կարմիր մեխակներ" — (ինքնուրոյն հանրամատչելի ժողովածու) . 5 "
- 4) "Կարմիր մեխակներ" — երկրորդ պրակ, ժողովածու . 5 "
- 5) Բ. ՍՕԼՕՎԷՕՎ — Հիւանդանոցային դրամաբեկներ, թարգմ. Սեղալի. 2 "
- 6) Ա. ԼՈՒՆԱՉԱՐՍԿԻ — Գեղարեստը գեղարեստի, թէ՛ գեղարեստը կեանքի համար, թարգ. Յ. Յակոբեանի 5 "

**Գ Ի Ն Ը 5 4 Ո Պ**

Գիմել Թիֆլիսի բոլոր գրախանութներին

«Ազգային գրադարան»



NL0296758

